

Միաբանութիւնը պատրաստ կ'ընծայէ ինքզինքը հիւրընկալելու Ընկերութեան գրաւոր աշխատութիւնները իւր հրատարակութիւններու հետեւեալ շարքերուն մէջ.

1. «Հանդէս Ամսօրեայ» հայագիտական ուսումնաթերթը. ուր կարելի պիտի ըլլայ Հ. և Հ. Մ. Բարեկամներուն աշխատակցիլ հայերէն և միջազգային լեզուներով:
 2. Ազգային Մատենադարան, հայերէն մասնագիտական ուսումնասիրութեանց համար:
 3. Studien zur armenischen Geschichte und Kultur, որեւէ միջազգային լեզուով մասնագիտական հետազոտութեանց համար:
 4. Քննական հրատարակութիւն Մատենադրութեան և թարգմանութեանց Նախնայ Հայոց. հայերէն բնագիրներու համար:
 5. Bibliothek der alten armenischen Literatur, հայ բնագիրներու միջազգային լեզուներով թարգմանութեանց համար:
 6. Նիւթեր և ուսումնասիրութիւններ հայ արուեստի, հնագրութեան և մանրակերպչութեան պատմութեան համար. հայերէն և միջազգային լեզուներով:
 7. Մայր Յուցակ հայերէն ձեռագրաց. հայերէն և միջազգային լեզուներով:
- Ընկերութեանս կրնան անդամակցիլ աւելին անոնք, որոնք կը պարտաւորին հայագիտութեամբ և կամ կը փափաղին նպաստա-

մատոյց ըլլալ հայագիտութեան բարոյապէս և նիւթապէս:

- Ընկերութիւնը կը կազմուի՝
- ա. Հիմնադիր անդամներէ, որոնք կը զննեն Ընկերութեան տրամադրութեան տակ միանուագ առ նուազն 20 անդիւական ոսկի:
 - բ. Իրական անդամներ, որոնք անդամագրուած են Ընկերութեան տարեկան մէկ անդիւական ոսկի անդամաւճարով:
 - գ. Թղթակից անդամներ. որոնք կ'աշխատակցին Ընկերութեան հրատարակութեանց, յանունէ «Հանդէս Ամսօրեայ» ուսումնաթերթին:

Ընկերութեան հիմնադիր և իրական անդամները 50% զեղչով կը ստանան «Հանդէս Ամսօրեայ» ուսումնաթերթին և Ընկերութեան հրատարակութիւնները:

Իւրաքանչիւր ամսվերջին կը հրատարակուի Ընկերութեան տեղեկագիրն և անդամներու ցուցակը, իրրեւ յաւելուած «Հանդէս Ամսօրեայ» ուսումնաթերթին:

Ընկերութեան մուտքը պիտի յատկացուի հայագիտական հետազոտութեանց, յատկապէս «Հանդէս Ամսօրեայ»-ի հրատարակութեան:

Ընկերութեան բարոյապէս և նիւթապէս ամրապնդուելէն կախում ունի անոր գործունէութեան ընթացքը:

ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Ի ՄԱՍԻՆ «ԱՐԱՄԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ»

Վիեննայի Միթարեան Միաբանութիւնը հիմնած էր 1843ին «Արամեան Ընկերութիւնը», որուն նպատակն էր կազմել տոկոսաբեր գրամագլուխ մը և անոր տոկոսներով հրատարակել ուսումնական գրքեր: Ընկերութիւնը յրթացաւ 1845—1920 տարիներու լոյս ընծայեց 16 հատոր:

Համաշխարհային պատերազմի հետեւութեամբ տեղի ունեցած դրամական արժէքի դիմադրող ընչացուց Ընկերութեան գրամագլուխը, 31.400 կրօնէ աւստրիական, որ վերածուած էր տոկոսաբեր արժէթղթերու: Այսօր Ընկերութիւնը ունի տրամադրելի 1504.57 աւստրիական չիլլինգ իրրեւ գրամագլուխ և

իր հրատարակութիւններու պահեստը՝ առ նուանական 23.700 չիլլինգ արժողութեամբ:

Միթարեան Միաբանութիւնը նկատի առնելով, թէ Ընկերութեան գրամագլուխն այս դոյզն գումարը թոյլ պիտի չտայ շարունակելու Ընկերութեան հրատարակչական գործունէութիւնը, կ'որոշէ վերոյիշեալ գրամագլուխն և Ընկերութեան հրատարակութիւններու վաճառմամբ գոյացած գումարը փոխանցել Հայագիտութեան և հայ Մշակութիւն Բարեկամներու Ընկերութեան՝ ի նպաստ հայագիտական հրատարակութիւններու գործածելու համար:

ՄԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ


ԱՌԱՔԵԼ ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆ (Կ. ՏԻՐԵԱՆ) ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈՒՆԵԱՐ ՔՐԱԿԱՆ ԱՍՊԱՐԷԶԻ ՎՐԱՅ

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆԷ

Աղեքսանդր Մանթաշեանի Նաթային արդիւնաբերական Հիմնարկութեան գրասենեակին պաշտօնեան է ան, որ աստիճանաբար բարձրացած՝ եղած է նոյն Հիմնարկութեան վարիչը: Իր 75ամեայ հասակին կը տօնէ ան ոչ իր առեւտրական մարդին վրայ բարգաւաճած արդիւնաւոր գործունէութեան յորելեանը, այլ 50ամեայ Յորելեանը գրական բեղուն գործունէութեան մը: Ա. Մանթաշեանի գրասենեակին պաշտօնեան գրասէր և գրագէտ է միանգամայն, հետեւող մը ազգային գրական և քաղաքական կեանքին, ինքնին արտայայտուող: Իր անձին այս բարեմասնութիւնը կու տան Յորելեանին եղական փայլ: Առաքել Չատիկեան Սարուխանեան (գրական կեդրոնաւոր Կ. Տիրեան), ծնած է 19 հոկտեմբեր 1862 (Ն. Տ.) Սարուխանի վրան և 19 հոկտեմբեր 1862 (Ն. Տ.) Սարուխանի վրան և 19 հոկտեմբեր 1862 (Ն. Տ.) Սարուխանի վրան:

Սարուխանի վրան և 19 հոկտեմբեր 1862 (Ն. Տ.) Սարուխանի վրան և 19 հոկտեմբեր 1862 (Ն. Տ.) Սարուխանի վրան:

տանին իր խնամոց տակ: Աւարտելով Վարժարանին ուսման ընթացքը յաջողութեամբ, կը վերադառնայ հայրենիք: Այստեղ է 1881ին Ուսեալ երիտասարդին մուտք, խաւարի մէջ կ'երեւայ շրջապատը. գիտութիւնը չէր թափանցած հոն այնչափով, ինչպէս կ'ակնկալէր անիկա: Կը դատափետէ ուսուցչութիւնը նաեւ հրապարակաւ: 1881, Յուլիսի 25ին կը հրատարակէր «Մշակ» (Թ. 36) «Ա. Ս.» ստորագրութեամբ «Նամակ Արդանուչից»: Գ. Արծրունի «Բանասիրական» բաժնին մէջ զետեղած էր իր նոր թղթակցին առաջին թղթակցութիւնը, ուր Արդանուչի քաղաքի և շրջականներու դպրոցական և տնտեսական կեանքը կը նկարագրուէր քննադատի հայեցողութեամբ: Միաժամանակ կ'առաջարկէր



ԱՌԱՔԵԼ ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆ (Կ. ՏԻՐԵԱՆ)

Ա. Ս. Մշակի խմբագրին ըլլալ թերթին տեղական թղթակիցը: Գ. Արծրունի սիրով կ'ողջունէ իւր նոր թղթակիցը և կ'ընդունի անոր առաջարկը: Յաջորդ տարին երեւան կու գար նոյն թերթին մէջ (1882, Թ. 14) այդ թղթակիցը «Առաքել Չ. Սարուխանեան» ստորագրութեամբ, այս